ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ ԹԻՒ Դ. **1870** ՕԳՈՍՏՈՍ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՁԱՒ

Ելբրուզին՝ պարսատիրաբար՝ Երկրորդական էմատոյ յարմարեալ Հրալեռոր Ի Մեծի-մատոյ ալարդապետին ալարդանոյ՝ յերկոս երանելի Պարոնն Գրիգորիս Լուսաւորչի Հայոց աշխարհին։

(Շարունակութիւն)

Զի տեսիլ եղև աշխարհի և հրեշտակաց արժանաւոր զարմացման բոլոր սեռից և տեսակաց. զի հանդէս մեծ գործեաց բանսարկուն հանդերձ ամենայն դեւօք իւրովք, և թափեաց 'ի նա զամենայն հնարս իւր, և սպառեաց 'ի մի յանձն յայն աստուածամուխ՝ զամենայն նետս իւր, և ջարդեաց 'ի վերայ նորա զամենայն հնարից իւրոց մեքենայս՝ 'ի ձեռն տիեզերաստաստ և բուռն թագաւորութեան Արշակունեաց. քանզի ոչ տեսակ բազմակոուտ չարչարանացն Քրիստոսի՝ զոր ոչ կրեաց յինքեան։ Ա.) Բեւեռն բարանացն ընկալաւ երկնագնացք թաթք ոտից նորա. Բ.) 'ի կոճեղս յոլորանս եղեալ և քամեցաւ յարենէ երկիւղիւ Ցեառն մաշեալք սրունք ոչ քանց նորա։ Գ.) Կապիճս երկաթեայ և դառնակսկիծ ընկալաւ կախաղանօք կարկամեալ և գետնամածեալ 'ի ծնրադրութեանն ծունկք նորա՝ երիս աւուրս։ Դ.) Բրածեծ եղեալ աստուածակիր բարձք անդամոց նորա։ Ե.) Զրաչարչար պարպատմամբ և ուռուցմամբ ստորագելուլ անարգանօք վտանգեցաւ ողջախոհ՝ պարկեշտ և սուրբ որովայն նորա։ Զ.) Հառաշեղս աղի վերամբարձ յորմն վարսեալ, ընկալաւ զեօթն օր՝ Աստուծոյ օրինացն բեռնաբարձ աղն նորա հանդերձ զելարանօք ճարճատմանց կրծից նորա. առասանօք չարահնար պնդեալ անրօք և խեղդանօք կեղեքեցաւ լծաբարձ օրինացն Քրիստոսի՝ և պարանոց նորա. գէշս ձրգիչս և պատառիչս ընկալաւ աստուածարան բե-

բան Նորա, և գանգանաւանդս՝ Քրիստոսակիր կղակ Նորա։ Է.) Զեօթն օր զլեխվայր կախեալ 'ի միոյ ոտանէն՝ և հոտս աղբոց ընկալաւ՝ անուշարուրիչ հոգւոյն արժանաւոր ոնգունք Նորա։ Ը.) Զվեց օր մոխրաշունչ եղև անխառն օդոյ, զոր պարկն արգելոյր 'ի փողսն կապեալ։ Թ.) Բուրակ և բարկ քացախ ընկալաւ նոյն հոգեշունչ յիւթ Նորա։ Ժ.) Կռուփն՝ զոր կոփահարեցաւ չարչարակիր անձն Նորա։ ԺԱ.) Մամուլս էառ աստուածապսակ գլուխս Նորա։ Եւ այսոքիկ նկարագրութիւն անդամոցն զուտ և զուարթուն պատկերին Քրիստոսի՝ յոտից սկսեալ և 'ի գլուխն աւարտեալ, որպէս ասեն առնել զքաջ պատկերակիցն տիեզերաց, յոտիցն ձեռնարկեալ, յորում շարժիլ թուէր՝ անշունչ տեսողաց։ Ի վերայ այսր ամենայնի՝ որպէս զոսկի ճամուկ ծիրանի երեքլարեան մարգարտով հիւսեալ, արկցուք զբովանդակ արքունական պատկերաւն, մանաւանդ թէ ինքն արկաւ զհիւրեաւ ոստայնանկն աստուածիմաստ։ ԺԲ.) Զտատասկն՝ որով ամենայն մարմինն ծակոտեալ և խծուծ լեալ՝ արիւնաքամ եղեալ։ ԺԳ.) Զքերանն յոտից մինչև ցգլուխն, որովք մերկացան նշխարք սուրբ ոսկերաց Նորա։ ԺԴ.) Զկապարն հալեալ և քաջեռաց, որով և խորովեցան խլեցան ջիլք, և խանձողեցան ոսկերք Նորա։ Եւ արդ մի՞թէ փոքր էր նահատակին հանդէս. ուր Արարիչն եկեալ հրեղինացն դասուք՝ տեսանէր զարժանաւորն տեսիլ, որ և անծանօթ դարուց և ժամանակաց, յորմէհետէ եղև մարդ 'ի վերայ երկրի։ Մի՞թէ փոքր էր պատարագն՝ յորոյ հոտոյ լցան երկինք և երկիր, և կենդանացան զարմք և զաւակք տանս Հայկազեանց՝ Արշակունեաց և Պաղհաւաց։ Մի՞թէ փոքր էր պարծանք որդւոց առ այնպիսի Հայր, եթէ միշտ զշաւիղս Նորա գնայցեն։ Մի՞թէ թոյլ ետ այլում հօր վեհագոյն գտանել քան զինքն։ Մի՞թէ սակաւ և դիւզնաքեայ չարչարանօք եղև Հայր, և բազմութիւն որդւոց էած 'ի փառս։ Մի՞թէ վայրապար զարհուրեալ դողային երիկամունք թշնամեացն՝ և լուծանէին ջիլք բազկաց նոցա, ընկեցեալ լինէին զաղեղունս, և գնային բացէ 'ի բաց փախստականք։ Որոց հրաշից նմանէին և Վիրապին սքանչելիք, բայց եթէ իջանելոյ որդւոյն Աստուծոյ 'ի սորին վայրս մահու՝ և 'ի դժոխս ներքինիս։ ուր յաղթահարեալ կործանեցաւ ապականութիւն։ Որպէս և Փոխանին Յիսուսի իջանելով 'ի դարանս զգալի և իմանալի վիշապաց՝ շիջանէին խայթոցք մահարերին։ Ջախջախեալ լինէր գլուխ ապստամբ վիշապին։ աւերէր տուն բնակութեան խաւարասէր իշխանին։ ածեալ լինէր կիտոսն կարթիւ և շղուշակաւ խաչին նշանի։ սանձէր նովիմբ յահաւոր կնքոյն՝ և զբերանս երևելի օձիցն, որպէս Դանիէլ զցուկ առիւծուցն, և կայր մնայր անդէն 'ի մէջ նոցա՝ ոչ զերիս աւուրս միայն որպէս Յունան 'ի փոր ձկանն, կամ Մարգարէն 'ի գուբ գազանացն, այլ զամս հնգետասան պահելով զնա վերին խնամոցն իրրև զփեսայ յառագաստի, և որպէս քահանայ 'ի խորանի սարկաւագեալ 'ի խարամանեաց օձիցն։ այլ արժանապէս սպասաւորեալ 'ի հրեշտակաց սրբոց՝ որպէս և ինքն պատմէ։ Քանզի և երկինք լինէր խորութիւն բանտին, բնակութիւն զուարթնոյ՝ որջն գիւաց, կենաց գործարան՝ տեղին մահապարտաց։ Քանզի հովանի լինէր Հօրն մերում Աջն հայրենի։ բառնայր զնա բարձեալ բազուկն Յիսուսի։ Ողջագուրէ զնա մխիթարիչն Հոգի։ զի թէ ոչ լինէր այս, զիա՞րդ մնայր կենդանի յայսպիսի տեղւոջ, որ 'ի բարձրութենէ անկումն 'ի խոնարհ և հոտն մահաբեր և կամ ահագին տեսիլն վիշապաց՝ բաւական էր վաղվաղակի քամել զշունչ Նորա։ Այլ այն՝ որ ասէր ցնահապետն Յակոբ, մի՝ երկնչիր իջանել յԵգիպտոս, զի ես եղեց ընդ քեզ, և ես հանից զքեզ անտի, զնոյն բարբառ աւետեաց կրկնէր մերում Նախահօրս Գրիգորի։ և առեալ զձեռանէ Նորա իջանէր ընդ նմա՝ և ասէր, ես եմ Աստուածն քո բաւականն՝ և դարմանէր զնա շտեմարանեալ զգանձն կենաց՝ և բազմալոյս արեգակն՝ զայնքան ժամանակս 'ի խորս անդնդոց։ և յիւրում ժամանակի վերաբերեալ քաղցրագոյն արևով և պայծառ լուսով ցուցանէր աշխարհի, որոց 'ի խաւարի և 'ի ստուերս մահու նստեալ ննջէին։ յորմէ լուսոյ զարհուրեալ դողք և աւաղակք՝ շնացողք և սպանողք՝ որք շրջէին և գործէին 'ի խոր գիշերոյ, չքոտեալ ննջէին։ և 'ի միջոյ գազանք վայրենիք՝ յորջս իւրեանց դիմեցին։ Ելանէր մարդ և որդի մարդոյ 'ի գործս իւր և 'ի վաստակս ձեռաց։ փարէին արտս և տնկէին այգիս, և առնէին պտուղ

արմտեաց յանգաստանս սրբեալ և պարարտացեալ. և նոյն քրտամբ և արեամբ սրբոյն Հոիսիսմեանց ոռոգեալ կուսիցն իմաստնոց՝ օրիորդացն սրբոց. որք իբրև զաստեղակուռ բանակս արփիախաղաց ճառագայթիւք յարևմտից յարևելս զիմեալք. զի ծագեսցին մեզ ընդ մերոյն արեգական. և զարդարեսցեն նոր աստեղքն զնոր երկինքն՝ որ եղև Հայաստան աշխարհիս. այսինքն է՝ բարձրութիւն պարծանաց հաւատոյ. և զիսորհուրդ հարսանեսց եկեղեցւոյ սրբոյ, հարսունքն Քրիստոսի պճնագեղեալք ՝ի հանդերձս ոսկեհուռս վերջաւորս և քղանցաւորս կազմեալք և թագ ՝ի գլուխս պսակեալք՝ յօգնականութիւն ածեալք ՝ի Տեառնէ փեսաւէրին մերոյ, զի խօսեսցին զբարեստոհմիկ ծնունդն Թորգոմայ՝ երկնաւոր փեսային, և լցին կուսութեամբ մայր ազգաց և աղանց նորածնաց. և կուսական կաթամբ սնուցեալ հասուցին յայր կատարեալ ՝ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի. որք և զայս արարեալ և ՝ի գլուխ տարեալ՝ զփոխարէնն առաքեն աղօթիւք և ազդմամբ վերին շնորհացն զարևելեան արեգակն՝ . . . ՝ի մուտս արևու, ուստի էին ինքեանք. զի անդրէն տարեալ զփոխարէնն ձեռնտուութիւն հատուցէ քաղաքի նոցա Հռոմայ և աշխարհին Իտալիացւոց և ամենայն Եւրոպիայ՝ ծագելով նոցա լոյս՝ և ջերմ ճառագայթիւք արասցէ նոցա՝ զարուն հոգևոր և պտղածին, և ցուցցէ միմեանց զնորոգեալ նորընծայ Քրիստոսապսակեալ թագաւորն՝ այն ինչ արմատ արձակեալ ՝ի խոնարհ, և նորարոդրոջ բուսովք և ծաղկօք իւրովք ՝ի վեր փթթեալ, ոստս և շառաւիղս արձակեալ ընդ լայնութիւն և ընդ երկայնութիւն աշխարհի՝ ածելով ՝ի հաւատս զամենայն հնազանդեալս իւրեանց, Տրդատ և Կոստանդիանոս, Գրիգորիոս և Սեղբեստրոս, ցանկալի և արժանատենչ տեսութեան Աստուծոյ և Աստուածասիրաց. և ոչ երկինք իւրով վայելչական զարդուքն այնպէս գեղեցիկ է՝ որպէս յայնժամ եկեղեցին այսպիսի Հայրապետաբ և Թագաւորաբ շքեղացեալ վայելչանայր. Ո՞բարերար և ամենարաղդ ժամանակին, և պսակեալ տարւոյն ՝ի ժամ՝ և ամսոյն ՝ի տարւոջն, և շաբաթուն ՝ի յամիսն, և շնորհաւոր և օրհնեալ աւուրն. Յորժամ տեսին նոքա զմիմեանս և փարեին զիրերաբ՝ չորք սիւնքն՝ չորք անկիւնն տիեզերաց՝ դրախտարուխ գետքն՝ և աւետարանչաց պատկերքն. Ո՞տայր մեզ զտեսութիւն զայն ցանկալի, և զերծ յայժմու թշուառութենէս և ՝ի վատաբաղդութեանցս. Ցնծացաւ երկիր. զուարճացաւ ծով լրիւ իւրով՝ տիեզերք և ամենայն բնակիչք, և ուրախութիւն եղև յերկինս առաջի Աստուծոյ, որպէս ասաց մեծն Կոստանդիանոս՝ ընդ մեծավարն Գրիգորիոս. Հայր սուրբ. ոչ դրան ուրախութիւն է յերկինս վասն այսքանեաց ազգաց փրկութեան՝ և ընդ գալուստ ձեր խոնարհութեամբ առ մեզ. Եւ նա ասէ. անպատմելի և անճառելի ցնծութիւն. Եւ թագաւորին պատասխանի տուեալ ասաց. Թէ նոքա յերկինս ուրախ են ընդ մեր փրկութիւնս, ապա մեք փրկեալքս՝ մի՛ վերջասցուք ՝ի խնդութենէն. և հրաման հանեալ ընդ ամենայն Իտալիայ՝ առնել տօնս ցնծութեան և ուրախութեան մեծ զենլեօք անբան կենդանեաց, և բանական պատարագ սաղմոսիւք և օրհնութեամբ՝ և երգովք հոգևորօք. զոր ոչ ոք կարէ իմանալ կամ պատմել ամենայն մի ժամանակ. զրգէին գգուէին զմիմեանս, զարմանային ընդ տեսութիւն Աստուծոյ՝ զոր ինչ արար նա. Ուստանէր ապա մեծն Կոստանդիանոս ոճով զհաւատս զխոստովանութիւնն յուղղափառ ՝ի Հօրէն մերմէ՝ մեծաւ երկիւղիւ և պատկառանօք, որպէս ՝ի նոյն ինքն ՝ի Հոգւոյն սրբոյ. Պատարագէին, ուխտս կատարէին, հաղորդէին ՝ի միմեանց. դաշինս դնէին, կտակս գրէին, երդումն անլուծանելի երդնուին ՝ի վերայ միմեանց ՝ի կեալ և մեռանել յազգէ յազգ մինչ յաւիտեան. Եւ այսպէս սիրական պարգևօք և առաքելական նրշխարօք սուրբ ոսկերաց՝ դառնային գային արքն յաշխարհ՝ լի հոգևոր բերկրանօք և առողջութեամբ մարմնոյ և պէսպէս շնորհագործութեամբ՝ ՝ի ծովու և ՝ի ցամաքէ՝ ՝ի փառս և ՝ի գովեստս մեծի և երկնաւոր զօրութեանցն. և յիւրական հասեալ վիճակի. սկիզբն առնէր սովորական վարդապետութեանն, ՝ի Սատալացւոց քաղաքէն՝ մինչև յաշխարհն Խախտեաց, և ցԿլարձս, և ցՄ՝ասքուրս, և մինչև ՝ի զրուէնս Ալանաց, և ցսահմանս Կասրից և ցՓայտակարան քաղաք Հայոց. և յԱրամանցուաց քաղաքէն մինչև ցՄծբին առ Շիրական աշխարհաւն, ՝ի Կորդուաց մինչև ցԱմուր

աշխարհն Մարաց, և առ տամբն Մաքրտաց աշխարհին, և առ Ատրպատականաւ։ Եւ առաւել ևս քան զայս լընոյր աւետարանաւն Քրիստոսի՝ ծայրէ ի ծայր զամենայն առ հասարակ. զորս գնեաց չարչարանօք, առողջացուցեալ զնոսին աստուածարան լեզուաւն բարեբարեպէս զարդարէր։ Քանզի ոչ եթէ առանց մեծի խորհրդոյ էին իրք վըշտակիր Նեղութեանց Նորա. այլ զոր ինչ կրեաց Հայրն մեր պարծանաց, աղդմամբ և արդեամբք ընկալաք մեք ի պարգևացն Աստուծոյ։ Բեռն աղին՝ զոր երարձ ի թիկունք Նորա համբերող, երարձ ի թիկանց մերոց զբեռինս մեղաց, և համեմեաց զանհամութիւնս մեր աղիւն ճշմարտութեան։ Գլուխիվայր կախին Նորա, ուղղեաց զգնացս մեր ի բարձունս։ Ջուրն՝ լուաց զաղտ հնութեան մերոյ։ Մոխիրն՝ երեր մեզ օծումն ուրախութեան։ Քացախն՝ երարձ զկիրս մերոյ տկարութեանս։ Ցատասկն՝ զփուշ մերոյ խղճմտանացն։ Քերանքս՝ զմարմինն ապականադործ։ Գապարն՝ զծանրութիւն պարտեացն։ Դանդաւանդն՝ զանառնական հնազանդութիւն։ Թիւք չորեքտասան չարչարանացն՝ եկեաց զաղբիւրս ախտիցն՝ որ յայնմ հասակի սկսանին։ Եւ արարին զկեանս մեր՝ ամենաճառագայթ՝ որպէս լուսին զչորեքտասան զիշերն իւր։ Վիրապին իրք՝ զվիրաւորեալքս և զչոսեալքս յերկնից ի խորս անդնդոց։ Ի վեր ածեալ զմեզ ի յերկինս եհան, որպէս Տէրն զՀոգիսն ի գժոխոց։ Թիւք հնգետասան՝ օրհնեաց զարձակումն և զսկիզբն ծննդեան մերոյ, զի անտի սկսանիմք։ Եւ զի երեք հնգետասան զդայութիւնս մեր՝ անխեթկելի և առանց թուոնից թշնամւոյն պարսպեաց բազմաբան վարդապետութեամբն. ծնաւ աղդս բաղումս աւաղանաւն դրոշմեալ, մինչ զի եօթն օր մլրտէր իւրովք ձեռօքն՝ չորք հարիւր բիւր անձինս։ Եպիսկոպոս կացուցանէր իւրովք լուսաբաշխ աջովն չորք հարիւր ոգիս. և Քահանայս և Սարկաւագունս և Դպիրս, որոց ոչ գոյ թիւ։ Վասն նոցա չինէր անապատս և բնակեցուցանէր. աղքատանոցս և հիւրանոցս պատրաստէր ըստ աշխարհաց՝ գաւառաց՝ գիւղից և ազարակաց։ Եկեղեցիս հաստատէր ապարանօք պիտոյից, չորս հոլ եկեղեցւոյ ազարակին, և եօթն մեծացն գեղից և աւանից։ Դ.զրոցս յօրինէր, մանուկս հաւաքէր, և վարդապետս Ցոյն և Ասորի գրոյ և լեզուի գիտակս՝ կացուցանէր։ Ռոճիկս կարգէր յարքունուստ. և զուարճացուցանէր զթագաւորն Քրիստոսասէր յայսոսիկ։ Քանզի Խոյտայր, զուարճանայր, ցնծայր առաջի զարդուն եկեղեցւոյ, որպէս Դաւիթ արքայ առաջի Տապանակին Աստուծոյ։ Ցեռ այսորիկ առանձնանայր, ի լուութեան կայր թաքստեամբ յանապատս և ի զերծս տեղիս։ Զի ամենայն աստիճանս Աստուածային շնորհացն փառաւորեսցէ։ Առաջինն, որդեգրութեան շնորհի արժանի եղև աւաղանաւն։ Երկրորդ, էառ զպսակն մարտիրոսաց։ Երրորդ, եղ ի գահն քահանայութեան։ Չորրորդ, ի քահանայապետութեան աթոռ նստաւ։ Հինգերրորդ, եհաս մարդարէական պատուոյ։ Վեցերորդ, բարձրացաւ յԱռաքելական պատիւ։ Եօթներորդ, վերացաւ ոսկիապատ թեւօք, և յառանձնական վարս յորդորեալ յԱնտոնէ և ի Կրոնիդեայ, զի այնպէս կացցէ, և անգիտելի բնաւից վախճանեսցի Մովսիսարար. զի մի՝ պաշտեսցեն զոսկերս Նորա դեռահաւատ և նորածնունդ որդիք Նորա՝ Հայաստանեայք. զոր և արարն իսկ, և բնակեցաւ ի լեառն Սեպուհ, որ և այժմ կոչի սուրբ Գրիգոր։

(Մնացորդն է յետոյ)։

ՀԱՑ ԵՐԵԽԱՑԻՑ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՆ.

Հայկեան անուան դրեալ գոյ է վեր Ազգի Հրէից։

Մեր ազգի օտարամոլ սովորութիւնը՝ իբր քաղաքակրթութիւն համարուած է իրան մէջը. վասնզի ինչ ազգի մէջ որ բնակի, կրջանայ նոյն ազգի բոլոր սովորութեանց նմանող լինիլ՝ թէ լեզուով՝ թէ բարքով՝ թէ հագուստով՝ թէ անունով և թէ որ և իցէ շարժմանց. թէպէտ ներկայի է ամէն մի սովորութեանց հետևող լինիլը բայց չի ներուիլ այն բանին, որն որ թէ ազգութեան և թէ կրօնին անպատուութիւն կը բերէ. զորօրինակ՝ երեխաներին անուանակոչութեանց մասին. զի փոխանակ սրբոց և նախնի Հայ անուանց՝ մուրանալով այլոց ազգաց անուններ